Հեքիաթ, Արձակ

13+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԹՌՉՈՂ ԽՈԶԸ

Մեծ Սև ժայռի տակ, աղտոտ-գարշահոտ, տղմուտ մի ճահիճ կար և այդ ճահճի մեջ, ամառվա շոգին, գալիս էր թավալելու և փոքր-ինչ ննջելու մի գիրուկ մեծ խոզ:

Հանգիստ անկյուն էր, տիղմն առատ, խոնավ և աղտեղի. խոզը՝ շատակեր, ինչպես ամեն խոզ, ճարպոտ ու գիրուկ՝ ինչպես ամեն պորտաբույծ: Լավ ուտելուց հետո մի կողքի վրա պառկում էր, առաջ երկար թավալում, ցեխով շաղախվում, հետո ոտները պարզում, մռութը ցցում և խռնչալով, աչքերը փակած կամ լուռ՝ մարսում էր և կամ թե ննջում:

Եվ երջանիկ էր, գոհ, ու լիառատ. աղբ — փառք աստծո, առատ ու պարարտ, ինքն էլ — երբե՛ք հիվանդ, միշտ ճարպոտ, առողջ, մռութը ցեխոտ, հագուստը՝ շքեղ տղմով թաթախուն:

Էլ ի՞նչ հոգս ուներ, կամ ինչո՞ւ երազ, ճահճից վեր մտեր, տղմից բարձր՝ վերելք, աղբից դուրս՝ այլ օդ:

———

Ու մի ամառվա օր, երբ այդպես ճաշած, մռութը մինչև աչքերը տղմոտ, փորը ոտներին կպչելու չափ գիրացած՝ հասավ ճահճին, մեկնվեց մի կողքի վրա, մի աչքը միայն բաց՝ լռիկ մարսում էր — հանկարծ մի ձայն լսեց իրենից վերև:

Քիչ աչքերը բարձրացրեց և ի՛նչ տեսնե:

Մի արծիվ էր այն: Սլանալով իջել, ժայռի գլխին էր կանգնել և կռացել՝ պառկած խոզին էր նայում:

Դիակ էր կարծել, քաղցած էր, մտածել էր հեռվից այլ փայլփլող սպիտակ գիրուկ ազդրիցը մի քիչ ճաշակել:

Բայց երբ գլուխը կռացած՝ տեսավ, որ խոզը շարժվում էր, աչքերը պտտեցնում, ասաց նեղացած.

— Ահ, ուրեմն դիակ չե՞ս եղել դու: Կարծում էի, թե մեռած ես: Գիտե՞ս, շատ անոթի եմ:

— Իսկ ես լավ կուշտ եմ,— խոսեց խոզը,— և ահա այժմ եկել՝ հանգստանում եմ:

Հետո հեգնորեն ժպտաց ու ավելացրեց:

— Չգիտեի, որ արծիվը կարող է անոթի մնալ կամ ուտելիք չգտնել… Եթե կուզես, ահա, իջիր. ճահճիս մեջ որդ ու գորտ՝ որքան ուզես… Համեցե՛ք, մի՛ քաշվիր…

— Շնորհակալ եմ,— ասաց արծիվը,— մենք ո՛չ որդ ենք ուտում և ո՛չ էլ՝ գորտեր… Ա՛յ, եթե այդքան բարի ես, թույլ տուր այդ ազդրիցդ մի կտոր վերցնեմ և դա ինձ բավական է:

— Ինչպե՛ս չէ…— ծիծաղեց խոզը,— իմ ազդրը քեզ նմանների համար չէ՛ պահված... Ասում են, որ նրանից ազնիվ համով ապուխտ են շինում և թանկ գնահատում... Իսկ քո մսիցը ոչինչ չե՞ն շինում:

— Ոչինչ: Մեր միսը չի ուտվում:

— Ֆո՛ւհ. երևի անհոտ միս է. խոստովանվում եմ, երբե՛ք չեմ սիրում հոտ չունեցող բաները:

— Կերածնիդ մի՞թե միշտ հոտած բաներ են:

— Միշտ: Նրանք բոլորն էլ անշուշտ հոտած են և լա՛վ հոտ ունին... Ա՛յ, հենց այսօր, քիչ առաջ աղբանոցի մեջ ի՛նչ ասես չկար — հոտած միս և հաց, սեխի կճեպներ, բանջար, արմատներ… դու արմատներ չե՞ս ուտում:

— Ոչ. մի՛միայն միս:

— Ես ամե՛ն բան ուտում եմ. ազնվական չեմ ես, սիրո՛ւմ եմ ուտել ամեն բան, խտրություն դնել չգիտեմ. ինչ տան՝ ուրախությամբ... Բայց գիտե՞ս, բարեկա՛մ, վիզս ցավեց քեզ նայելով. եթե ուզում ես հետս խոսել, իջիր և կողքիս կանգնիր… Մանավանդ որ այստեղ շատ ավելի զով է, քան այդտեղ, այրող արևի տակ:

Արծիվը երերցրեց գլուխն ու ասաց.

— Ո՛չ… այստեղ լավ է. տիղմիդ մեջ եթե իջնեմ՝ կխրվեմ:

— Եվ ի՞նչ կլինի դրանից,— հետաքրքրվեց խոզը զարմացած,— ավելի լավ չէ՞. զո՛վ, թա՛ց…

— Կկեղտոտվեմ:

— Ինչպե՛ս… կեղտոտվե՛լ... Եվ մի՞թե կեղտոտվելը վատ է: Ես ուրիշ տեսակ չգիտեմ. իմ հաճույքն է այդպես թավալել, վերարկուս տիղմով զարդարել, մռութս նրանով օծել… Գիտե՞ս, այդ մինչև անգամ օգտակա՛ր էլ է. մարդ զովանում է, մի տեսակ երանության մեջ ընկնում... Խոստովանվում եմ, ես առանց դրան ապրել չեմ կարող:

— Հասկանում եմ. այդպես էլ ծնվել ես:

— Այո… Եվ չեմ հասկանում, թե ինչպե՛ս այդ վերարկուդ նախ չի այրվում արեգակից և հետո չի այրում քեզ: Մի՞թե դու զովանալու պետք չես զգում երբեք. մանավանդ երբ ինձ պես ուտես, մի լավ կշտանաս…

Ու խոզը մեծաձայն հորանջեց, շուռ-մուռ եկավ, նոր տղմով թաթախվեց, խռնչյունով մռութը կոխեց ճահճի մեջ, տրորեց հաճույքով, մեծ բավականությամբ:

Արծիվը նայում էր նրան զզվանքով և մտածում էր, թե արդյոք չիջնե՞լ և կտուցի մի հարվածով կտրել մի կտոր միս փայլուն ազդրիցն ու թողնել հեռանալ:

— Հը՛, խը՛մ, խը՛մ…— արեց խոզը նորից պառկելով,— ա՛յ թե ինչ կասեմ քեզ, արծի՛վ: Հավատացիր ինձ, տղմի մեջ ապրելուց լավ կյանք լինել չի կարող: Նախ, որ կուշտ կլինես և ո՛չ քեզ պես անոթի. հետո՝ կգիրանաս և ո՛չ այդպես կմախք կմնաս. և երրորդ — երբե՛ք շոգը քեզ չի նեղացնիլ…խը՛մ, խը՛մ… ինձ չե՞ս հավատում. հարցրո՛ւ ուրեմն գորտերին, որդերին… Ա՛յ, տեսնո՞ւմ ես. բոլորն էլ գիրուկ, առողջ են և կուշտ:

— Տեսնում եմ,— ասաց արծիվը,— երևում է, որ ճահճի մեջ ապրելը թե՛ կշտացնում է և թե՛ գիրացնում:

— Անպատճառ,— հաստատեց խոզը:— Ապացույց դրան՝ որ ո՛չ մի նիհար խոզ չե՛ս տեսնիլ. նույնիսկ մեր ձագերը գիրուկ են… իսկ ի՞նչ եք դուք, թռչուններդ, որ, չգիտեմ ինչու, թռչում եք այդ

բարձրերում, վերարկունիդ պարզում, արևի տակ ոտներնիդ ցնցում… ի՞նչ ունիք, ախր, այնտեղ. մե՞ծ բան կա այդ դատարկ տարածության մեջ, որ այդքան սիրում եք ման գալ այնտեղ… Ա՛յ, իջեք այստեղ. առա՛տ կերակուր, զովացնող թարմություն, փափուկ անկողին… Հը՞, աստվածդ սիրես. ասա՛, ի՞նչ լավ բան կա այն բարձրերում. օրինակ հենց, ի՞նչ ուտելիք կամ ի՞նչ խմելիք կա և որտե՞ղ է:

Արծիվը կտուցը բացուխուփ արավ, թևերը թափահարեց, մեծ քրքիջ արձակեց ու ասաց.

— Հասկանում եմ, իհարկե որտեղի՞ց մի խոզ իմանա բարձրությունների մեջ թռչելու հաճույքը, մաքուր օդի ազնվացնող ազդեցությունը, լայն հորիզոնի գեղեցկությունը…

— Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ…— խռկացրեց խոզը,— նորից կրկնի՛ր... հա՛, հա՛, հա՛, ա՛յ լավ ասացիր… բանաստեղծ ես եղել, բարեկա՛մ փետրավոր… իսկ անոթի լինե՞լդ, կմախքային նիհարությո՞ւնդ… դրա՞նց ինչ կասես, դրա՛նց… Այնտեղ այդ բարձրությանդ, մաքուր օդիդ և լայն հորիզոնիդ գեղեցկության մեջ սեխի մնացորդներ կա՞ն, աղբի պարարտ ու որդալից պատառներ լինո՞ւմ են, տղմային զով ու փափուկ անկողին գտնվո՞ւմ է...

— Քեզ հետ խոսելն էլ ավելորդ է,— գոչեց արհամարհությամբ արծիվը,— դու ո՛չ մի գաղափար չունիս մաքրության և գեղեցկության մասին…

— Ա՛յ, կասես,— կանչեց խոզը,— չունիմ իհարկե… մաքրությո՞ւնս որն է, գեղեցկությո՞ւնս որն է... փորդ կո՞ւշտ է, մարմինդ՝ պարա՞ռտ, անկողինդ՝ փափո՞ւկ ահա քեզ և՛ մաքրություն, և՛ գեղեցկություն. մնացած ամեն ինչ հիմարություն է և ցանցառամտություն… Գնա՛, եղբա՛յր, գնա՛ քաղցած փորովդ մաքրությանդ ու գեղեցկությանդ մեջ…

Ասաց խոզը, նորից մի լավ հորանջեց, շուռ-մուռ եկավ տղմի մեջ, մռութը նորից կոխեց թացացրեց և աչքերը փակեց։

Այն ժամանակ արծիվը, որ անոթությունից նվաղելու մոտ էր, գլուխը բարձրացրեց ու նայում էր այս-այն կողմ՝ գոնե ուտելու բան գտնելու համար:

Բայց խոզը, որ միայն մի վայրկյան էր աչքը փակել, նորից բաց արավ, հեգնությամբ դիտեց արծվի զբաղմունքը մի րոպե, հետո ասաց ծաղրով.

— Հը՞... բան չկա՞ ուտելու. քաղցա՞ծ ես… Խե՛ղճ մաքրության ու գեղեցկության սիրահար. երևի վերջ ի վերջո պիտի բարեհաճես մեր կողմն իջնել և մեր կերածիցը բաժին ուզել…

Արծիվը, որը հանկարծակիի էր եկել, բարկացած ճչաց.

— Երբե՛ք… Բայց ա՛յ, որպեսզի իմանաս, թե արծիվը գիտե քեզ նման խոզերի ուտել, հիմա պիտի իջնեմ և այդ գեր ազդրդ ամբողջությամբ պոկ տամ ու վերցնեմ…

— Կամա՛ց, կամա՛ց…— գոռաց խոզը և վախից վեր թռավ ու նստեց,— այդպես հիմարություն, հույս ունիմ, որ չես անիլ… Եվ վերջապես,— ավելացրեց նա մի քիչ սիրտ առած,— ես այժմ գիտե՛մ քեզ նման բանաստեղծներին վախեցնել… Ա՛յ, տեսնո՞ւմ ես. այժմ ես նստել եմ… նայի՛ր. տեսածդ ի՞նչ է:

— Գարշելի մեջքդ ու մռութդ:

— Ահա՛... հենց այդ է, որ կա. զարդարուն հագուստս և բերանս… Դե՛հ, իջիր տեսնե՛նք, մաքրության և գեղեցկության սիրահար, տեսնենք կտուցդ կկամենա՞ս տղմոտել…

Արծիվը, որ պատրաստվում էր ասածը կատարելու և արդեն քիչ բարձրացել էր, նորից նստավ: Իրավ, որ զզվելի էր խոզը յուր գարշահոտ մեջքովն ու մռութովը, մինչ փափուկ ու սպիտակ ազդրն իսկ այժմ կոխել էր տղմի մեջ:

— Իջիր, է՛ է՛…— քրքջաց խոզը,— համեցե՛ք, ազդրս էլ այստեղ է... տիղմի մեջ. կտուցդ առաջ տիղմի պիտի մտնի, որ նրան հասնի… Իջիր տեսնե՞նք…

Արծիվը չիջավ: Լուռ և անշարժ նստել էր՝ դեմքի վրա միմիայն խորին զզվանքի արտահայտություն ունենալով:

— Հը՞, ո՞նց ես,— խոսեց խոզը,— տեսնում եմ, որ իզուր ինձ անհանգիստ արիր: Գնա՛, գնա՛ բարձրերդ. խոզերիս շատ էլ միամիտ մի՛ կարծիլ… Ա՛յ, ողջ և առատ լինի տիղմը. քեզ նմանները որ գան, մեզ շրջապատող տիղմը մեր զե՛նքը կլինի… Բայց, քանի որ քունս փախցրիր, կուզես՝ մնա՛ այդտեղ և քիչ էլ խոսենք... Սպասիր մի լավ տեղավորվեմ առաջ…

Ասաց, ընկղմեց տիղմի մեջ մինչև փորը, մռութը դրավ ճահճի վրա, աչքերն ուղղեց արծվին և շարունակեց.

— Ահա՛, այժմ հանգիստ եմ: Խոսենք… Ա՛յ թե ինչ էի ուզում հարցնել քեզ: Մի՞թե իրավ չէ, որ բոլոր փետրավորներիդ ուղեղը ոտիս մի պճեղի չափ էլ չկա. խելքներդ օդով լի և ինքներդ՝ ցանցառ... Մի՛ նեղանալ, խնդրեմ… Ասենք կուզես նեղացիր, այլևս ոչինչ չես կարող անել ինձ… Հա՛, պատասխանիր, խնդրեմ, իրա՛վ է, օրինակ, որ բոլոր այդ բարձր թռչողներդ սարսափելի պարծենկոտ եք և կարծում եք, թե մի առանձնաշնորհված, ուրիշ տեսակի անասուններ եք:

— Չեմ հասկանում,— ասաց արծիվը,— ինչո՞ւ ես հարցնում այդ բոլոր հիմար բաները, որ բխում են ճահճի մեջ սնված քո «խոշոր» ուղեղից:

— Չվիրավորենք իրար,— խրատեց խոզը,— ա՛յ, իմ ասածը ա՛յն է, որ դուք՝ բոլոր այդ բարձր թռչողներդ, ինչ-որ շա՛տ պարծենկոտ եք և կարծում եք, թե ձեր արածը մի մեծ բան է... Նախ որ, ես թռնելու փափագ երբե՛ք չեմ ունեցել. երկրորդ որ, ինձ թվում է, եթե փափագ ունենամ, կարող եմ քեզանից ո՛չ պակաս թռնել…

— Ի՞նչ…— ծիծաղեց արծիվը,— դու, այդ ճարպոտ մարմնո՞վդ, տղմաթաթախ մռութո՞վդ…

— Խնդրե՛մ, խնդրե՛մ... Դու գուցե չգիտես, որ առողջ և կուշտ փորով շա՛տ ավելի լավ կարելի է թռնել…

— Ապա՞, փորձիր տեսնե՞նք. իսկ թևե՞ր, թևեր որտեղի՞ց կգտնես:

Ու արծիվը սաստիկ զվարճություն զգաց խոզի այդ հավակնոտությունից. այնպես որ մոռացավ իսկ քաղցը:

— Թևե՞ր…— ասաց խոզը,— փա՛հ... ի՛նչ պիտի անեմ այդ անպետք փետուրները. մի՞թե անպատճառ թև պետք է թռնելու համար:

— Ապա ինչպե՞ս,— զարմացավ արծիվը,— առանց թևի թռնելը չէի լսել:

— Հենց այդ է, է՛ է՛... չես լսել, իհարկե, այնտեղ բարձրում ի՞նչ կարող ես լսել որ… թևերը ցանցառամիտ, թեթևամիտ, մարդկանց համար է. իսկ կուշտ փորով, առողջ, այլև հաստատ գետնի վրա ման եկողների համար ավելորդ բաներ են նրանք:

— Իսկ թռնելու համա՞ր:

— Շատ պարզ է. կբարձրանաս մի քարի, ժայռի վրա, ոտներդ կպարզես և ահա, մեկ էլ տեսար, կթռնես… կուշտ փորով և առողջ մարդը ինչե՞ր չի կարող անել:

Արծիվն ապշած էր: Մի՞թե, իսկապես, խոզը լուրջ էր խոսում և կարելի էր առանց թևի, միմիայն կուշտ փորի և առողջ մարմնի շնորհիվ թռիչքներ անել:

— Դու կարո՞ղ ես այդ անել,— հարցրեց նա,— դու, որ փորդ կուշտ է և մարմինդ առողջ:

— Ե՞ս,— խոնչաց խոզը,— հը՛մ… ասենք իհարկե, դժվար չի՛ անելը. բայց ինչո՞ւ, ի՞նչ պետք. մի՞թե ճահիճս բավական չէ ինձ և կամ ցած տեղերում ուտելիք է պակասում:

— Այդպե՞ս… ծիծաղեց արծիվը,— ուրեմն մեծախոսե՛լ գիտես և փորդ ուռցնե՞լ:

Խոզը, իրավ է, թեև խոզ էր և տղմաթաթախ, բայց անձնասիրություն էլ ուներ, իհարկե խոզային, և վիրավորվեց:

— Ես չեմ պարծենում,— ասաց նա,— եթե ուզենամ՝ կանեմ:

— Չփորձե՞ս մեկ:

— Ավելորդ բան... կանեմ ասացի՝ պրծավ գնաց:

— Լա՛վ, լա՛վ, տեսնում եմ, որ ստախոսն ես եղել: Ուրեմն, քանի որ սնոտի պարծենկոտությունդ երևաց, ե՛տ առ բոլոր առաջի ասածներդ:

— Այսինքն որո՞նք:

— Որ իբր թե առանց թևի կարելի է թռնել:

— Ետ չե՛մ առնիլ… Խոզերը կամակոր են լինում… Կթռնեմ…

— Դե՛հ, փորձի՛ր ուրեմն… նայում եմ…

Խոզը ներքնապես զղջաց, որ այդքան առաջ էր գնացել: Չգիտեր, թե ինչ բան էր թռնելը, բայց համոզվածի պես էր, որ եթե կամենար, ինքն էլ կարող էր անել: Սակայն արծվի հակառակությունը սկսել էր կասկած զարթեցնել նրա մեջ, որ գուցե, իրա՛վ, թևե՛ր են հարկավոր եղել:

— Փորձենք մեկ,— մտածեց նա,— իսկապես, մի՞թե չի կարելի թռնել. ինչո՞ւ ոչ, մենք էլ աստծո ստեղծածը չե՞նք…

մանավանդ որ առողջ և կուշտ ենք՝ քան այդ փետրավորները:

Եվ դուրս եկավ տիղմի միջից, դարձավ արծվին ու ասաց հպարտությամբ.

— Ի՞նչ կա. կարող եմ ցույց տալ քեզ ընդունակությունս... Հարկավո՛ր է վերջապես հասկացնել քեզ՝ օդերի մեջ սավառնող քաղցածներիդ, որ եթե մենք կամենանք, շա՛տ ավելի հեշտ է մեզ համար թռնելը և ձեզնից էլ լավ թռնել. որովհետև մենք մի՛շտ կուշտ ենք և առողջ. մի բան, որ ձեզնից շա՛տ շատերը չեն… Բայց ինձ հարկավոր է նախ ելնել այդ ժայռի վրա և շատ շոգ է, ինքս էլ քիչ գեր եմ…

— Քաշվում ես, պատճառնե՞ր ես որոնում…

— Ո՛չ երբեք… Ի՜նչ արած, կբարձրանամ… Միայն, տե՛ս, պատվիդ վրա երդվիր, որ ազդրս կմոռանաս:

— Ձեռք չեմ տալ քեզ, քանի ողջ ես:

— Ինչպե՜ս…— կանգ առավ խոզը հուզված,— ինչպե՜ս թե քանի ողջ եմ: Ի՞նչ է, մտածում ես, որ կմեռնե՞մ:

— Անպատճառ,— ծիծաղեց արծիվը,— կջարդվես, կտոր-կտոր կլինես… Խոզերի ի՞նչ բանն է թռնելը:

— Դե՛հ, դե՛հ, շա՛տ ես առաջ գնում... իսկ եթե թռա՜...

Արծիվը ծիծաղեց նորից…

— Եթե թռար,— ասաց նա,— գաղափարս կփոխեմ խոզերի մասին և ամեն տեղ կհռչակեմ, որ մի թռչող խոզ տեսա:

— Ուրեմն այդքան հազվագյուտ է եղել խոզի թռնելը, հա՞...

— Թռնելը, նախ բավական դժվար է. և երկրորդ, չկա խոզ, որ թռած լինի:

— Ա՜յ թե ինչ… իսկ ես կհաստատեմ հակառակը… թող ողջ աշխարհն իմանա, որ ես՝ Սև ժայռի տակի տղմերի խոզս, թռնում եմ… Խոստանո՞ւմ ես փառքս տարածել:

— Մե՛ծ ուրախությամբ…

— Գալիս եմ ուրեմն… Տե՛ղ պատրաստիր ինձ…

Ու խոզն այս անգամ հպարտ, առաջ անցավ և սկսեց պտույտներով դեպի ժայռի կատարն ելնել, որտեղից նա վճռել էր թռիչք գործել և ամբողջ աշխարհին զարմացնել, անունն էլ հռչակել:

Արյուն-քրտինք մտած, շոգից գրեթե խեղդվելով, մի ամբողջ ժամից հետո հազիվ նա կարողացավ հասնել արծվին, որ ժպտուն դեմքով սպասում էր նրան:

Խոզը մոտ գնաց, բարևեց ու ասաց.

— Իրա՛վ, եղբայր, տաժանելի է բարձրանալը. իմ տիղմի մի կտորը չեմ փոխիլ այս հիմար չոր ժայռի հետ… Եվ այդ ապացուցանելու համար, այստեղից թռիչք կգործեմ նախ դեպի վեր, հետո, երբ տեսար, որ կարող եմ թռչել, դարձյալ կիջնեմ իմ զով բնակարանը... Համաձա՞յն ես:

— Ուրախությամբ… Բայց շո՛ւտ արա, խոսելն ավելորդ է, թռի՛ր, ես սաստիկ անոթի եմ:

— Կարծեմ իմ թռնելը քեզ չի կշտացնիլ,— ասաց խոզը սիրտը դող ելած:

— Իսկ ես անհամբերությամբ հենց դրա՛ն եմ սպասում… Երբ խոզը թռնել է ուզում, արծիվը՝ փորն է կշտացնում…

— Ուզում ես ասել, որ կջարդվե՞մ:

— Անպատճա՛ռ...

— Հիմարությո՛ւն… Դե՛ն կաց և լավ նայիր… Ես քո ասած խոզերիցը չե՛մ…

Հետո հպարտությամբ առաջ գնաց դեպի ժայռի ափը, բայց սոսկումով ետ քաշվեց, երբ նկատեց ցածում եղած խորությունն ու քարակույտերը:

Պահ մի քի՛չ մնաց ետ քաշվեր և խոստովաներ հաղթված լինելը. բայց արծիվը ծիծաղում էր: Անպիտան թռչունի չար քրքիջը գրգռում էր նրան:

Ինչ որ էլ լիներ, պետք էր ցույց տալ այդ պարծենկոտին, որ խոզն էլ պակաս թռնել չի կարող, թե կամենա:

Ու աչքերը փակեց, խռկաց և նետեց իրեն դեպի առաջ, մտածելով առաջ մի շնորհալի պտույտ անել օդի մեջ, հիմարացած արծվին զմայլեցնել…

Եվ ո՛չ թե այդ շնորհալի պտույտը դեպի բարձր տեղի ունեցավ, այլ ընդհակառակն, ընկերակցությամբ թռչունի քրքիջների, գնաց խոզը ջախջախվելու և կտոր-կտոր լինելու ներքևի ժայռերի վրա…

Իսկ արծիվը, քրքիջը բերնին, իջավ մի լավ ճաշ անելու, խոզի հիմարության վրա ծիծաղելու…

Այս զրույցը երբ կարդաց մի գիտուն ու գեր կրոնավոր, չգիտեմ ինչո՞ւ, սաստիկ զայրացավ, ոտները գետնին խփեց ու գոռաց.

— Eppur sl muove![1]

[1] Եվ այնուամենայնիվ շարժվում է: